

**011401.13.6 «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավր և մագիստրատուրա:

Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է. շրջանավարտը ստանում է մանկավարժության բակալավրի, ուսուցչի որակավորում:

Բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն և երաժշտական պատրաստականություն, որը համապատասխանում է ընդունելության քննության պահանջներին:

**Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից մեկ քննություն:**

1. ԵՏՍ (բանավոր) - ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (բանավոր) և ՍՈԼՖԵՋԻՈ (բանավոր)

**ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

**1. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (բանավոր)**

Երաժշտության տարրական տեսության դասընթացի շրջանակներում (Աթայան, Սպոսոբին և այլն): Երաժշտական հնչյունը և նրա հատկանիշները: Հնչյունների անունները, նրանց նշանակումը: Տեմպերացիա: Ալտերացիայի նշանները: Խրոմատիկ և դիատոնիկ կիսատոները և տոները: Տևողության երկարացման միջոցները: Մետր, ռիթմ, տեմպ: Լադ, տոնայնություն: Միջնադարյան ժողովրդական երաժշտության լադերը (դորիական, լիդիական, մեքսոլիդիական, փոյուզիական և այլն): Ինտերվալներ: Ինտերվալների շրջվածքները, ինտերվալները լադերում: Կայուն և անկայուն ինտերվալները որոշակի լադի և տոնայնության մեջ: Նրանց լուծումը: Մեծացրած և փոքրացրած ինտերվալներ և նրանց լուծումը: Ակորդներ: Ակորդների տեսակները: Ակորդները լադերում: Խրոմատիզմ: Ներլադային ալտերացիա: Շեղում: Մոդուլացիա: Համադրություն: Տոնայնությունների ազգակցությունը: Մեղեդային շարժման տեսակները: Սեկվենցիաներ: Երաժշտական լեզվի կառուցման տարրերը: Փոխադրություն:

**Սոլֆեջիո (բանավոր)**

1. Բախումով թերթից ընթերցել մեղեդիներ, լսողությամբ որոշել երաժշտական լեզվի տարրերը, մեղեդու ինտերվալային կառուցվածքը, տոնայնության մեջ խրոմատիկ աստիճանի փոփոխության պատճառները:

2. Երգել ինտերվալներ տոնայնությունում և տրված հնչյունից (ինչպես նաև բնորոշ

ինտերվալներ), երգել եռահնչյունները շրջվածքներով, դոմինանտ սեպտակորդը և երկրորդ աստիճանի սեպտակորդը շրջվածքներով, յոթերորդ աստիճանի սեպտակորդը՝ փոքր և փոքրացված:

3. Լսողությամբ որոշել ինտերվալները և ակորդները, տոնայնության մեջ դիատոնիկ և խրոմատիկ աստիճանների փոփոխությունները, ակորդների հաջորդականությունները:

4. Երգել ժողովրդական երաժշտության լադերը, մաժոր և մինոր գամմաները (բնական, հարմոնիկ և մելոդիկ):

**011401.13.6 «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

**ՍՈԼՖԵՋԻՌ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

1-7 միավոր	դիմորդը ճիշտ չի պատասխանում ոչ մի հարցի:
8 միավոր	ա) դիմորդը ճիշտ չի պատասխանում երաժշտության տեսության հարցերին: բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 4-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է սխալներով (ինտոնացիոն և ռիթմական):
9-10 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին սխալներով: Բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 4-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է ոչ մաքուր:
11-12 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին սխալներով: Բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 5-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է ոչ մաքուր:
13-14 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին: Բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 5-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր, ոչ վարժ:
15-16 միավոր	ա) դիմորդը ճիշտ է պատասխանում երաժշտության տեսության հարցերին: Բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 6-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր:
17-18 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին առանց սխալի: Բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 7-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր ինտոնացիայով:
19-20 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին առանց սխալի: Բ) դիմորդը 8 ակորդից ճիշտ է որոշում 8-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր և վարժ: